

Խ. Ա. Հ. Մ. ՖԻՆԺՈՂԿՑԱՏ
ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Կ. Ա. 4/18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 1981 թ.

ՀՐԱՀԱՆԳ № 181

1186

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ, ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՂՈՒ-
ՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՆԱՄՆԵՐ
ՎՈՐՈՇԵԼՈՒ ՅԵՎ ՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ 24484



Պատ. խմբագիր՝ Հ. ԱՍ.ՐԴ.ԱՅՑԱՆ
Թարգմանիչ՝ ՄԻՐԶԱ. ԱՎ.ԱԳՅԱՆ

Սբագրիչ՝ Ա.Բ. ԳԵՂՈՐԳՅԱՆ

Կիբովականի տպարտն

Դյամիետի լիտոգր. № 608

Գատվեր. № 728

Տերթաք 3000

Խ. Ա. Հ. Մ. ԳԻՆԺՐՂՎՈՒԱՏ
ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Կ. Ա. 4/18

ՀՐԱՀԱՆԳ № 181

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ, ԹԻՉՈՒՆՆԵՐԻ ՑԵՎ ՄԵՂՈՒՆԵ-
ՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՆԱՄՆԵՐ ՎԱՐՈՇԵԼՈՒ
ՑԵՎ ՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կազմված ե՝ ա) ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1934 թ. հունիսի 19-ի՝ «Գյուղական վայրերում և քաղաքներում 1935 թվի պարտադիր կոպարային ապահովագրություն անցկացնելու վերաբերյալ» վորոշման, բ) ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1933 թվի մայիսի 28-ի վորոշմամբ հաստատված՝ պարտադիր կոպարային ապահովագրության կանոնների, գ) ԽՍՀՄ կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1934 թ. հունիսի 27-ի՝ «կամագոր ապահովագրության վերաբերյալ» և 1935 թ. «եպատեմբերի 17-ի» ԽՍՀՄ կենտրոնական և Ժողովրդամբերի 1934 թ. հունիսի 27-ի՝ «կամագոր ապահովագրության մասին վորոշումը փոփոխելու և լրացնելու վերաբերյալ» վորոշումների, դ) ԽՍՀՄ Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի՝ «Երջանային փինանսական բաժինների ապահովագրական տեսչությունների կողմէց գյուղական վայրերում կատարելիք աշխատանքի վերաբերյալ» հրահանգի (հաստատված ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1937 թ. ապրիլի 29-ի վորոշմամբ) հիման վրա:

ԽՆԴՐԻՄԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՑԵՎ ԽՆԴՐԻՄԻ ԱՆԱՍՈՒՆ-
ՆԵՐ ԵՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՊԱՐԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ

§ 1. Պարտադիր կոպարային կարգով ապահովագրվում են
այն անասունները, վորոնք պատկանում են.—

ա) կոլտնտեսություններին, գյուղատնտեսական կոմունա-
ներին, գյուղատնտեսական արտելներին և միասեղ հող մշակող

Ընկերություններին, բ) ձկնորսային կոլտնտեսություններին, գ) տնայնագործական-արհեստագործական կոռպերացիայի սկզբ-բնական կազմակերպություններին (գյուղական վայրերում) և հաշմանդամների կոռպերացիային (գյուղական վայրերում և քաղաքներում), դ) կոլտնտեսականներին տնտեսության վոչ հանրայնացված մասի վերաբերմամբ, ե) բանվորներին և ծառացողներին, զ) մենատնտես գյուղացիներին, ը) տնայնագործ-ներին, արհեստավորներին և այլ քաղաքացիներին:

§ 2. Կոլտնտեսություններում և սկզբնական կոռպերատիվ-ներում՝ պարտադիր կոպարային կարգով անց և կացվում.—

ա) ապահովագրություն ձիերի, ուղտերի, ավանակների, ջորիների և յեղիներուների—մեկ տարեկան հասակից, իսկ այդ տնասունների մատղաշների—6 ամսական հասակից.

բ) ապահովագրություն խոշոր յեղիներավոր անասուննե-րի—6 ամսական հասակից.

գ) ապահովագրություն վոչխարների, տյժերի և խողերի—6 ամսական հասակից:

§ 3. Կոլտնտեսականների մոտ տնտեսության վոչ հանրայ-նացված մասի վերաբերմամբ, բանվորների, ծառայողների, մե-նատնտես գյուղացիների, տնայնագործների, արհեստավորների և այլ քաղաքացիների մոտ պարտադիր կոպարային կարգով ա-պահովագրվում են.—ա) ձիերը, ուղտերը, ավանակները, ջորինե-րը և յեղիներուները—մեկ տարեկան հասակից, բ) խոշոր յեղ-իներավոր անասունները—6 ամսական հասակից և գ) կարակու-լի վոչխարները, իսկ այն տնտեսություններում, վորտեղ կա-րակուլի վոչխարների հետ միասին կան դմակավոր վոչխարներ-նուն գմակավոր վոչխարները—6 ամսական հասակից:

ԾԱՆՈՒԹՅՈՒԹՅՈՒՆ.—Կոլտնտեսականների մոտ ապա-հովագրվում են միմիայն այն անասուններին, վորոնց Գյու-ղատնտեսական արտելի կանոնագրությամբ թույլարվում և ունենալ անձնական կարիքների համար:

2. ՎՈՐ ԳԵՂՔԵՐՈՒՄ Ե ՊԵՏԱԿԾ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎՆԱՍՆԵՐՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՍԱԴԻՐ ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՄԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

§ 4. Վնասները հատուցվում են՝ ա) այն դեպքերում, յերբ ապահովագրված անասունը սատկում է բնական մահով, դժբախտ դեպքի հետևանքով (հրդեհից, շանթահարումից հեղեղումից և այլն) և անասունների համաճարտկ հիվանդությունների դեմ սրսկե-լուց, բ) այն դեպքերում, յերբ ապահովագրված անասունը

ապանվում ե (մորթվում) անասնաբուժի կամ անտառաբուժակի կարգադրությամբ—անասունների համաձարակ հիվանդությունները վորոշելու կամ դրանք դադարեցնելու համար, ինչպես նաև դժբախտ պատահարի և անբուժելի հիվանդության դեքում:

2. ՎՈՐ ԴԵԹՔԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՐԸ ԶԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎՆԱՍՆԵՐԸ

§ 5. Վնասները չեն հատուցվում, յեթե ապահովագրված անասունը սատկում է ապահովագրվողի մեղքով, այն ե.

ա) յեթե անասունը սատկում է բացահայտ անտառավարության, անխնա շահագործման կամ վնասարար վերաբերմունքունենալու հետեանքով (որինակ՝ անասունին ուժից վեր աշխատանքով ծանրաբեռնելը, անասունին ծեծելը, շատ արագ քշելը, վնասակար կեր տալը, տաքացած անասունին սառը ջուր տալը).

բ) յեթե անասնաբուժը կամ անասնաբուժակը հաստատում է, վոր անասունը վարակվել ե, վորովճեակ ապահովագրվողը չի պահպանել տվյալ վայրի համար պարտադիր վորոշումները վարակիչ հիվանդությունների գեմ պայքարելու վերաբերյալ, ինչպես նաև անասնաբուժական-սանիտարական կանոնները.

գ) այն դեպքերում, յերբ ապահովագրվողը սպանում է (մորթում) իր անասունը—տնտեսական նկատառութեարով:

Բացի այդ, անկախ ապահովագրված անասունի անկման պատճառներից, Պետապը չի հատուցում վնասները, յերբ ապահովագրվողը.—

ա) թագցնում ե տոմարագրումից տվյալ տեսակի անասուններին, յերբ հաշվառում է կատարվում պարտադիր կապարային ապահովագրության համար:

Արիթակ՝ ապահովագրվողի մոտ անասունների հաշվառման պահին յեղել ե 2 կով, իսկ նա տոմարագրել ե միմիայն մեկ կովի կովը նրա մոտ սատկելու դեպքում վնասը չի հատուցվում:

բ) չի հայտնում սահմանված ժամկետին ապահովագրված անասունի անկման մասին:

4. ՅԵՐԲ Ե ՍԿԱՎՈՒՄ ՅԵՎ ՅԵՎ ՅԵՐԲ ՎԵՐՉԱՆԴԻՄ ՊԵՏԱԿԱՐԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՂԻ ՀԱՆԴԵՐ

§ 6. Պետապի պատասխանատվությունը պարտագիր կապարային ապահովագրության գծով սկսվում է այն պահից, յերբ անասունները հասնում են այս հրահանդի § 2 և 3-ում նախառեսնված հաստկին:

§ 7. Այն անասունները, վորոնք մտնում են տնտեսության մեջ տվյալ վայրում անասունների հաշվառում անցկացնելուց հետո, ապահովագրված են համարվում անտեսության մեջ մտնելու դահից:

§ 8. Պետապի պատասխանատվությունն անասունների պարտագիր կողարային ապահովագրության գծով վերջանում ե.

ա) յերբ անասուններն անցնում են այնպիսի տնտեսության մեջ, վորի գույքը պարտադիր կողարային ապահովագրության յենթակա չե (որինակ՝ խորհանտեսություն):

բ) յերբ տվյալ տնտեսության մեջ անասունների ապահովագրությունը դադարեցված և շրջանային ապահովագրական հանձնաժողովի վորոշմամբ դեպի անասունները բացահայտ անտեսվար կամ մասամբ վերաբերմունք ցուցաբերելու համար:

Ապահովագրական տեսուչները պարտավոր են սիստեմատիկաբար ստուգել ապահովագրված անասունների դրությունը:

Յեթե ապահովագրվողը չի պահպանում պարտազիր վորոշումների վարակիչ հիմանդրությունների դեմ պայքարելու վերաբերյալ և յեթե հայտնաբերվում և անտեսվար վերաբերմունք դեպի անասունները, ապա ապահովագրական տեսուչը պարտավոր է գրավոր մատնացույց անել ապահովագրվողին նկատված թերությունները և առաջարկել կարճ ժամանակամիջոցում վերացնել այդ, նախադպուշացնելով, վորչկատարելու դեպքում անասունների ապահովագրությունը կ'դադրեցվի:

Այսուհետեւ, ապահովագրական տեսուչը կոլանտեսուկանների առաջին խսկ ժողովում կամ գյուղի քաղաքացիների ընդհանուր ժողովում հայտնում և նկատված թերությունների մասին և այն մասին, վոր յեթե այդ թերությունները չվերացվն, կոլանտեսության կամ առանձին քաղաքացիների անասունների ապահովագրությունը կ'դադրեցվի:

Յեթե չնայած նախադպուշացմանը, անասունների խնամքի բնագավառում նկատված թերությունները չեն վերացվի, ապա ապահովագրական տեսուչը պարտավոր է հարց դնել շրջանային ապահովագրական հանձնաժողովի տռաջ տվյալ անտեսության մեջ ապահովագրությունը դադարեցնելու մասին մինչև վոր տնտեսությունը կարգի կրերվի:

Ապահովագրությունը դադարեցնելու մասին կոլանտեսու-

թյուններին և այլ տնտեսություններին պետք և տեղեկացնել չըալոր:

Ապահովագրությունը դադարեցնելու մասին շրջանային ապահովագրական հանձնաժողովը պարտավոր և իրազեկ դարձնել տվյալ կոլտնտեսութան ընդհանուր ժողովին կամ գյուղի քաղաքացիների ընդհանուր ժողովին:

Արգահովագրությունը նույն շրջանային հանձնաժողովը կամ Գետապի հանրապետական, յերկրային, մարզային վարչությունը կարող և նորից վերականգնել այն դեպքում միայն, յեթե կհաստատվի, վոր այն պատճառները, վորոնք առիթ են ծառայել ապահովագրությունը դադարեցնելու համար վերացված են:

5. ԱՆԱՍՈՒՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՌԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԶԱՓԵՐԸ

§ 9. Անասուններ ապահովագրելին ապահովագրտկան վարձաբռնություն կոչվում և այն գումարը, վորով Գետապն ապահովագրում և տվյալ անասունին յեվ վորը Գետապը վճարում և ապահովագրվողին ապահովագրված անասունը սատկելու գեղքում:

§ 10. Պարտադիր կոպարային կարգով այս հրահանքի § 2 և 3-ում հիշատակված անասուններն ապահովագրվում են ապահովագրական վարձատրության կայուն նորմաներով՝ սահմանված յերկրային, մարզային գործադիր կոմիտեների, ինքնակար և մարզային բաժանում չունեցող դաշնակից հանրապետությունների ժողովմխորհների վորոշմաների այն միջին նորմաների հիման վրա, վորոնք սահմանված են ԽՍՀՄ ժողովմխորհի 1934 թ. հուլիսի 19-ի վորոշմամբ և դաշնակից հանրապետությունների ժողովմխորհների կողմից ի զարգացումն հրատարակվող վորոշումներով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1. Ապահովագրական վարձատրության նորմաները և ամսականից մինչև մեկ տարեկան հասակ ունեցող մատղաշ խոշոր յեղջերավոր անասունների և մեկ տարեկանից (իսկ աղնվածքով անասունների համար և ամսականից) մինչեւ 2 տարեկան հասակ ունեցող ձիերի, ուղտերի, ավանակների, ջորիների և յեղջերուների համար 50⁰/օ-ով իջեցվում են այն նորմաների համաձառնությամբ, վորոնք սահմանված են նույն տեսակի չափահաս անասունների համար:

2. Մեկ տարեկանից ավելի բարձր հասակ ունեցող խոշոր յեղջերավոր անասունները և 2 տարեկանից ավելի բարձր հասակ ունեցող աղնվացեղ ձիերը կոլտնտեսության ներում և սկզբնական կոռապերատիվներում անպայման ապահովագրվում են լրիվ արժեքով, ապահովագրական գնահատմաբ:

§ 11. Պարտադիր կոպարային կարգով ապահովագրված անասունների անկման դեպքում, վնասները հատուցվում են պարտադիր կոպարային ապահովագրության վարձատրության նորմայի չափով, անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի արժեք և ունեցել անասունն առ անկման որը: Կոլտնտեսությունների և սկզբնական կոռապերատիվների, լրիվ արժեքով ապահովագրված, աղնվացեղ անասունների անկման դեպքում, վնասները հատուցվում են այն դումարի չափով, վորով նրանք ապահովագրված են յեղել:

§ 12. Անասուններ մորթելու դեպքում (տես այս հրահանգի § 4 կետ «բ») վնասները հատուցվում են հետեւյալ կերպ.—

(ա) յեթե սպանված (մորթված) անասունի միսը պիտանի չի ճանաչված ուտելու համար կամ չի կարելի ոգտագործել ըստ տեղական պայմանների (որինակ, ձիու միսը), ապա վնասները հատուցվում են լրիվ, այսինքն, առանց մոխ արժեքը հանելու: Միան ուտելու համար վոչ պիտանի ճանաչելու հանգամանքը ողիտք և ապացուցել անասնաբուժի կամ անասնաբուժակի տեղեկանքով.

(բ) յեթե սպանված (մորթած) անասունի միսը պիտանի չի ճանաչված ուտելու համար, ապա վնասն հատուցելու հարցը լուծվում է հետեւյալ կերպ՝

1) աղնվացեղ անասուն սպանելու (մորթելու) դեպքում, վորը ապահովագրվում ե իր լրիվ արժեքով (§ 10-ի 2-րդ ծանոթությունը), վնասները հատուցվում են ապահովագրական վարձատրության և մոխ արժեքի միջև յեղած տարբերությամբ.

2) ապահովագրական վարձատրության կայուն նորմայով ապահովագրված անասուն սպանելու (մորթելու) վեպքում (§ 10) վնասները չեն հատուցվում, քանի վոր մոխ պրժեքը միշտ այդ նորմայից ավելի բարձր ե:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մասի արժեքը վորոշվում է միս ընդունող պիտական կամ կոռապերատիվ մթերման կազմակերպության տեղեկանքի հիման վրա, իսկ յեթե տեղե-

կանքի մեջ մսի արժեքը չի հիշատակված, ապա մսի արժեքը յալ վայրում գոյություն ունեցող բարձրագույն—գնման գներով:

Նման տեղեկանք չմինելու դեպքում մսի արժեքը վորոշվում և տեղական կուտահային շուկայի գներով:

§ 13. Այն ձիերի համար, վոր տնտեսություններից գրավվում են խլախտի և ինֆեկցիոն սակավարնության գիմ պայքարելու կարգով, վասաները հատուցվում են հետևյալ կերպ.—

ա) յեթե ձին գրավված և առանց նրան փոխարինելու առողջ ձիով և առանց վորեե գրամական փոխհատուցում տարու, ապա վասաները վճարվում են, այնպես, ինչպես սատկած ձիու համար, այս հրահանդի § 11-ում նախատեսնված կարգով.

բ) յեթե ձին գրավված և և նրա փոխարեն տնտեսությանը մի ուրիշ ձի յի արված կամ գրամական փոխհատուցում ապահովագրական վարձատրությունից վոչ պակաս գումարով, ապա Պետապը վճարում.

գ) իսկ յեթե գրավված ձիու համար տնտեսությունը գրամական փոխհատուցում և ստանում ապահովագրական վարձատրությունից ավելի աակաս գումարով, ապա Պետապը վճարում և ապահովագրական վարձատրության և գրավված ձիու համար ստացված գումարի տարբերությունը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այն ձիերը, վորոնք խլախտի և ինֆեկցիոն սակավարնության դեմ պայքարելու կարգով փոխադրված են հատուկ անտեսություններ (մարլին և անեմո տնտեսություններ) ապահովագրության յենթակա չեն և ստուկելու կամ մորթելու դեպքում վասաները չեն հատուցվում:

§ 14. Զի թույլատրվում ընկած կամ սպանված անասունի զաշվի և դիակի արժեքն ապահովագրվողին վճարվող գումարից պահելը:

6. ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՂԻ ՊԱՐՏՎԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 15. Ապահովագրված անասունների տերերը (կոլտնտեսությունները, ոկղոնական կոոպերատիվները, կոլտնտեսականները, մենատնտես գյուղացիները և այլ քաղաքացիները) պարտավոր են լով խնամել անասուններին, պահպանել անասունագույնական-սանիտարական կանոններն ու անասունների վարու-

կիչ հիվանդությունների դեմ պայքարելու վերաբերյալ պարագագումները և ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցներն անասունների անկումը կանխելու համար:

§ 16. Անասունը հիվանդանալիս կամ նրա հետ գժբախտ դեպք պատահելիս ապահովագրվողը պարտավոր և միջոցներ ձեռք առնել անհրաժեշտ ոգնություն ցույց տալու համար, գիշելով անասնաբուժաբանին, անասնաբուժական ամբուլատորիային կամ անասնաբուժական կայանին:

§ 17. Ապահովագրված անասունը սատկելու գնապքում առահեռվագրվողը պարտավոր և պահել նրա դիակը կամ մնացորդներն անկման մասին ակտ կազմելու համար:

Յեթե անասնաբուժը, անապահութակը կամ գյուղխորհութեագրը բացահայտ հատկանիշներով վորոշում են, վոր անասունը վարակիչ հիվանդությունից և սատկել, ապա ապահովագրվողը վոչ միայն կարող է, այլ և պետք և անմիջապես հեռացնի գիտելու, վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու վերաբերյալ գործող պարտագիր վորոշումների համաձայն նման գեղաքերում տպահովագրվողը դիակը հեռացնում և գյուղխորհրդիչներկայացուցչի կամ յերկու վկայի ներկայությամբ:

§ 18. Յեթե այն անձինք, վորոնց վրա յե զրված ակտ կտպմելու պարտականությունը (տես այս հրահանգի § 23) այս հրահանգի § 27-ում նախատեսնված ժամկետում անտեսության չեն ներկայանալ ապա ապահովագրվողը՝ չսպասելով նրանց գալուն, պարտավոր և հեռացնել դիակը գյուղխորհրդիչ ներկայացուցչի կամ յերկու վկայի ներկայությամբ:

§ 19. Ապահովագրված անասունի անկման մասին ապահովագրվողը պարտավոր և վոչ ուշ քան յերկու որվա ընթացքում հայտնել գյուղխորհրդին:

Յեթե սատկում և 2000 ո. ավելի գումարով ապահովագրված անասուն, ինչպես նաև յեթե տնտեսության մեջ միաժամանակ սատկում են մի քանի անասուններ, ապա ապահովագրվողը պարտավոր և նույն ժամկետում հայտնել այդ մասին վոչ միայն գյուղխորհրդին, այլ և շրջանային, քաղաքային կամ յենթաշրջանային ապահովագրական ավագ տեսչին:

Վորագիս կանոն, այդ հաղորդումը պետք ե լինի գրավոր և պարզորդ պետք և ցույց տրված լինի՝ թե յերբ (ամիս և ամսաթիվ) և վոր տնտեսության մեջ և սատկել անասունը:

§ 20. Տնտեսության մեջ իրը թե անդի ունեցած վատանե-

րի վերաբերյալ սույտ և հորինված հայտաբարություններ տառ
լու համար ապահովագրվողը յենթարկվում է քրեական պա-
տասխանատվության:

§ 21. Յեթե սատկած ապահովագրված անասունի դիակը
չի կարելի ներկայացնել զննելու համար այն անձանց, վորոնք
յեկել են ակտ կազմելու նպատակով՝ վորովհետև դիակը թաղած
է կամ հանձնված ուսիլ գործարանին (ճարպահալման) կամ
անասունը սատկել ե տվյալ շրջանից զուրս (ճանապարհին) կամ
խեղպվել ե գետում, սատկել ե ձորում փլուզման ժամանակ և
այլն, ապա ապահովագրվողը պետք է հաստատի անասունի
անկման փաստը համապատասխան փաստաթղթերով (ակտ, տե-
ղեկանք, վկայական և այլն) կամ ականատես վկաների ցույ-
ցունքների միջոցով:

§ 22. Անասունին սպանելու (մորթելու դեպքում) տես այս
հրահանգի § 4) ապահովագրվողը պետք ե ներկայացնի ակտ
կազմելու համար յեկած անձանց, տեղեկանք պետական կամ
կոռպերատիվ մթերման կազմակերպությունից հանձնված մսի
քանակի և արժեքի մասին, իսկ միսն ուսիլու համար պիտանի
չինելու պատճառով վոչնչացնելու դեպքում, տեղեկանք այն
անասունաբուժից կամ անասունաբուժակից, վորը միսն անպետք ե
ճանաչել (տես այս հրահանգի § 12):

7. ՈՎ ՅԵՎ ՅԵՐԻ Ե ԱԿՏԵՐ ԿԱԶՄՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԱՆԿՄԱՆ ՄԱՍԻՆ

§ 23. Ակտեր անասունների անկման մասին կազմում են.—

ա) անասունների անկման յեղակի դեպքերում—դյուզիսոր-
հուրդը.

բ) յեթե նույն տնտեսության մեջ կամ գյուղում միաժա-
մանակ և նույնանման պատճառներով սատկում են մի քանի
անասուններ—յենթաշրջանային ապահովագրական տեսուչը.

գ) այն դեպքերում, յերբ սատկում են 2000 ռ. ավելի արժեք
ունեցող անասուններ, ինչպես նաև, յեթե նույն տնտեսության
մեջ կամ, գյուղում միաժամանակ և նույնանման պատճառնե-
րով սատկած անասունների ապահովագրական վարձատրության
ընդհանուր գումարը 2000 ռ. ավելի յիշ—ավագ շրջանային կամ
քաղաքային ապահովագրական տեսուչը:

§ 24. Այն բոլոր կասկածելի դեպքերում, յերբ պարզ չ-

զինում, թե ինչից և սատկել անասունը և մասնավորապես, չետառակել արդյոք ապահովագրվողի մեղքով—ակտ կազմելուն պետք և մասնակից անել անասնաբուժին կամ անասնաբուժակին:

§ 25. Ակտ անասունների անկման մասին պետք և կազմել անպայման ապահովագրվողի մասնակցությամբ, այն և՝
ա) կոլտնտեսություններում և սկզբնական կոռուպտատիվ-ներում—վարչության նախագահի կամ վարչության հատուկ դրա համար լիազորված անդամի ներկայությամբ,

բ) կոլտնտեսականների, մենատնտես գյուղացիների և այլ քաղաքացիների մոտ—անասնատիրոջ կամ նրա ընտանիքի վորեցին չափահաս անդամի ներկայությամբ:

Վորապեսդի տեղի չունենան պետությանը խաքելու գեղաքեր, սիալ չվճարվեն վասները կամ անհիմն կերպով չ'մերժվի վասներ համարեցիլը, ապահովագրական տեսուչը պետք և մասնակից անի անասունների անկման պատճառները վորոշելու աշխատանքին առաջավոր, աղնիվ, լիակատար վատահություն վայելող, անասնաբուժությանը լավ ծանոթ կոլտնտեսականների (ընթերականների), ընտրելով նրանց գյուղխորհրդի առաջադրությամբ:

Ակտն ստորագրում են այն կազմօղ բոլոր անձինք, ինչպիս նաև ապահովագրվողը և ներկա յեղող ընթերականները:

Տարածայնություններն այն անձանց միջև, գորոնք մասնակցում են ակտ կազմելուն և ապահովագրվողի առարկությունները պետք և մատցնել ակտի մեջ:

§ 26. Ակտի ճշտության համար պատասխանատու յեն այն բոլոր անձինք, գորոնք մասնակցել են այն կազմելուն: Կեղծ կամ սուստ տեղեկություններ պարունակող ակտեր կազմելու համար հանցավորները յենթարկվում են քրիակտն պատասխանատվության:

§ 27. Ակտերը պետք և կազմեն՝ գյուղխորհուրդը—անասունի անկման մասին հայտարարություն ստանալու որը, յենթարձանային կամ ավագ շրջանային (քաղաքային) ապահովագրական տեսուչը—վոչ ուշ քան հայտարարությունն ստանալու հաջորդ որը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մուրմանի ոկրուգում (Լինինգարդի մարդ) Հյուսիսային, Արկելյան—Սիբիրի, Ռմակի,

Զելյաբինսկի և Սվերդլովյան մարզերում, Հեռավոր Արեել-քի, Կրասնոյարսկի և Հարավ-Սիբիրյան յերկրներում, Կոմի, Բուրյատ-Մոնղոլյան, Յակուտյան իՍլշ, Ղազախստանի, Կիրգիզյան, Ռուզբեկյան, Թուրքմենյան և Տաջիկյան իՍլշ-ում այդ ժամկետները կրկնապատկվում են:

§ 28. Ակտեր անասունների անկման մասին կազմվում են եԱՀՄ Ֆինֆողկոմանի կողմից սահմանված ձևով: Ակտի բոլոր հարցերին պետք է ճիշտ և լրիվ պատասխան տալ:

§ 29. Վորաբես կանոն, ակտը պետք է կազմել յուրաքանչյուր սատկած անասունի համար ասանձին: Բայց այն գեղքերում, յերբ նույն տնտեսության մեջ միաժամանակ և նույնանման պատճառով (հրցեն, հեղեղում և այլն) սատկում են միանգամից մի քանի անասուններ, կարելի յե կազմել մեկ ակտ Այս գեղքում ակտին պետք է կցել բոլոր սատկած անասունների ցուցակը, ցույց տալով այն գումարները, վորոնցով նըրանք պահանգագրված են:

§ 30. Յեթե զյուղնորհդի կամ ապահովագրական տեսչի կարծիքով (նայած թե նրանցից ով է կազմել ակտը) պետք է մերժել վնասներ հատուցելը, ապա ակտում պետք է նշել մերժման պատճառները:

§ 31. Անասունի անկման մասին ակտ կազմելիս պետք է ճշտորեն պարզված լինի և ակտում ցույց տրված անկման պատճառը: Յեթե անասնաբուժի կամ անասնաբուժակի բացակայության պատճառով անասունի անկման պատճառը պարզված չի լինում, ապա ակտում ցույց են տրվում այն հատկանիշները, վորոնք յեղել են անասունի հիվանդության և անկման ժամանակ:

Անասունը դժբախտ պատահարից սատկելու դեպքում ակտի մեջ պետք է ցույց տալ ինչպիսի դժբախտ պատահար և յեղել և ինչ պայմաններում է տեղի ունեցել:

§ 32. Անասունի հիվանդության և անկման պատճառները ճշտորեն վորոշելու համար ակտ կազմելիս անհրաժեշտ է այս գննելանասունի դիսկայլը և նրա մացորգները, իսկ յեթե այդ անհնար ե (տես այս հրահանդի § 21) հարցաքննել վկաններին, ը) անասունների ինսամքի և պահպանման պայմանները տնտեսության մեջ հետազոտելու միջոցով պարզել թե անասունի հիվանդությունն ու անկումն ապահովագրվողի անտնտեսավարության և դիտավորյալ գործողությունների հետեւնք չեն յեղել

արդյոք. դ) հարցաքննել այն անձանց, վորոնց հանձնաբարված և անասունների հսկողությունն ու խնամքը (ձիապահներ, անասնապահներ, հովիթներ, կթողներ և այլն):

§ 33. Ձիու անկման ժամանակակից կազմելիս ապահովագրվողից պետք ե պահանջնել ձիու անձնագիրը: Անձնագրի մեջ նշշվում ե անասունի անկման ու դրա պատճառի մասին, վորոնց հետո ակտի հետ միասին այն հանձնվում ե շրջանային ապահովագրական տեսչությանը և պահվում ակտին կից:

§ 34. Յեթե ակաը գյուղխորհուրդն ե կազմում, ապա ակտըն ու նրա արմատը պետք ե վավերացված լինեն գյուղխորհը դիրքի նախագահի կամ նրա տեղակալի ստորագրությամբ ու գյուղխորհի կնիքով: Դրանից հետո ակտն ուղարկվում ե յենթաշրջանային ապահովագրական տեսչին, իսկ արմատը մնում է գյուղխորհուրդում:

Ապահովագրվողի միջոցով ակտն ապահովագրական տեսչին հանձնելը, ինչպես նաև ակաը նրա մոտ (ապահովագրվողի) թողնելը չի թույլատրվում:

Յեթե անասնաբուժը կամ անասնաբուժակն ակտ կազմելու ժամանակ ներկա չեն լինում, ապա գյուղխորհի նախագահը պետք ե ուղարկի ակտը մոտակա անասնաբուժին կամ անասնաբուժակին անասունի հիվանդության և անկման պատճառների մասին յեղբակացություն տալու համար: Այս դեպքում անասնաբուժը կամ անասնաբուժակն անասունի հիվանդության և անկման մասին յեղբակացություն պետք ե տան ակտի տըլյալների, ամբողջատորիայի մատյանի նշումների, տնամեսության հետազոտման, ապահովագրվողի և անասունին խնամող անձանց հարցաքննության հիման վրա: Յեթե այդ անհնար ե, ապա ական ուղարկվում ե ապահովագրական տեսչությանն առանց անասնաբուժի յեղբակացության:

8. ԱԿՏԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ

§ 35. Գյուղխորհից ակտն ստանալուն պես յենթաշրջանային ապահովագրական տեսուչը պարտավոր ե ստուգել թե արդյոք ակտի բոլոր կետերին տրված են ճիշտ և լրիվ պատասխաններ, բոլոր փաստաթղթերն են արդյոք կցված ակտին և կարող ե արդյոք շրջանային ապահովագրական հանձնափողով լուծել տվյալ վկաները հատուցելու կամ մերժելու վերաբերյալ հաջոյը:

Յեթև յենթաշըջանային ապահովագրական տեսուչը կհայտա-
նաբերի, վոր ակտը սխալ և կազմված կամ կասկածներ և առաջ
բերում, ապա նա պարտավոր և ակտի փաստացի ստուգում
կտարել տեղում։ Այս ակտերը, վորոնք կասկածներ չեն առաջ
բերում, յենթաշըջանային ապահովագրական տեսուչը հանձնում
և ավագ շրջանային կամ քաղաքային ապահովագրական տես-
չին, վորը գրանցում ե ուստարում (վասների մատյան) և ա-
պա ստուգում և ակտերը, տալիս ե իր գրավոր յեղբակացու-
թյունը և ներկայացնում ե շրջանային ապահովագրական հանձ-
նաժողովի քննությանն ու հաստատմանը։

§ 36. Շրջանային ապահովագրական հանձնաժողովն ակ-
տերը քննում և հստատում ե վոչ ուշ քան ակտն ստանալուց
10 որվա ընթացքում։

§ 37. Ապահովագրական վարչություններն ու տեսուչները
պատասխանատու յեն ապահովագրական վարձատրություն վճա-
րելու կամ մերժելու վերաբերյալ հարցը ժամանակին և ճիշտ
լուծելու ու ապահովագրական կանոնների բյուրոկրատական
խեղաթյուրումներ թույլ չտալու համար։

Ապահովագրական վարչություններն ու տեսուչները հա-
տուել ուշադրություն պետք ե դարձնեն անսառների անկման
պատճառները վորոշելու վրա և հարցին պետք ե մոտենան վոչ
թե փորձալ ձևով, այլ ըստ դործի եյության ու հաշվի առնեն
այն բոլոր հանգամանքները, վորոնց առկայությամբ տվյալ
գեպքն ե պատահել այսինքն, տվյալ վասներն ապահովագրը-
վողի մեղքով են տեղի ունեցել արդյոք, թե դժբաղսա պատա-
հաբի հետևանք են։

Յեթև վասները կոլտնտեսության մեջ տեղի յեն ունենաւմ
առանձին կոլտնտեսականի մեղքով և ընդհանուր անտնտես ա-
վտրության, կարգապահության և հանրային սեփականության
պաշտպանության բացակայության հետևանք չեն, ապա կոլ-
տնտեսությունը չի զրկվում իր կրած վասների հատուցումն
սահալու իրավունքից։ Նման գեպքերում այն անձինք, վո-
րոնք մեղավոր են վասներ տեղի ունենալու գործում պետք ե
դատական պատասխանատվության յենթարկվեն։

§ 38. Պետապի որգաններն ու ֆինանսական բաժինների
վարիչները պետք ե հսկեն, վորպեսդի մասների հատուցման
ապարինի մեռժումներ չլինեն, վորպեսդի ապահովագր ական
տեսչություններն ու շրջանային ապահովագրական հանձնաժո-

դովմելն ուշագրությամբ ստուգեն անասունների անկման պատշաճությունները և անհապաղ հատուցեն մնասներն այն բոլոր դեպքերում, յերբ անասունների անկումը տեղի յեւ ունենում վոչ առաջավագրվողի մեղքով։ Ապահովագրական տեսուչը պիտք է լավ իմանա անասունների ապահովագրության վերաբերյալ վուրաջումները, կանոններն ու հրահանգները, անասնաբուժության դարգացման գործում կոլտնտեսականների ունեցած այն պարտականությունները, վորոնք նախատեսնված են գյուղատնտեսական արտելի կանոնագրությամբ, անասունների վարակիչ հիվանդությունների զեմ պայքարելու վերաբերյալ տվյալ վայրի համար պարտադիր վորոշումներն ու անասնաբուժական-սանիդաբական կանոնները։ Ապահովագրական տեսուչը պիտք է կազ հաստատի տեղական հողային որդաների և անասնաբուժական աշխատողների հետ։

§ 39. Յեթե ավագ շրջանային կամ քաղաքային ապահովագրական տեսուչը համաձայն չի լինում շրջանային ապահովագրական հանձնաժողովի վորոշմանը, ապա նա պարտավոր է բողոքարկել այն և գործը հանձնել Պետապի մարզային (յերկրային) վարչությանը, իսկ վորտեղ մարզային (յերկրային) վարչական բաժանում չկա—Պետապի հանրապետական վարչությանը, տալով բողոքարկման պատճառաբանությունը։ Այս դեպքում ֆասների վճարումը կասեցվում է մինչև Պետապի վարչության (վորին բողոք և արգած յեղել) այդ առթիվ կայացրած վորոշումն ստանալը։ Պետապի վարչությունը պիտք է քննի բողոքն այն ստանալուց 10 որվա ընթացքում և իր վորոշման մասին հայտնի ավագ ապահովագրական տեսչին։

Յեթե վերադաս ապահովագրական որդանն տասն որվա ընթացքում չի քննի ապահովագրական տեսչի բողոքը, ապա ֆասները պետք է հատուցել այն գումարով, վորը նշանակել է շրջանային ապահովագրական հանձնաժողովը։

§ 40. Պետապի մարզային, յերկրային և հանրապետական վարչությունները պետք է խիստ հսկողություն սահմանեն առատունների ապահովագրության մնասները վորոշելու և հատուցելու գործի վերաբերյամբ։ Այդ հսկողությունը պիտք է իրազեկել կամ տեղերը մեկնելու միջոցով (մանավանդ այն շրջանները, վորտեղ նկատվում է ֆասների ուղացում), կամ տեղերից պահանջանքած փաստաթղթերով։

§ 41. Շրջանային ապահովագրական հանձնաժողովի վճիռ-

ներն ավագ շրջանային կամ քաղաքային ապահովագրական տեսուչը մտցնում և արձանագրության մեջ, վորն ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները, ինչպես նաև անասունի անկաման վերաբերյալ ակտի մեջ։ Հանձնաժողովի վորոշման մասին նշումն ակտում ստորագրում և հանձնաժողովի նախագահը՝ վնասների քննության արդյունքի մասին ավագ ապահովագրական տեսուչը (վնասների մատյան)։

§ 42. Շրջանային ապահովագրական հանձնաժողովի կամ ապահովագրական որգանի վորոշման մասին (տես այս հրահանգի § 36 և 39) շրջանային ապահովագրական տեսչությունը պետք և ապահովագրվողին հայտնի յերեք որվա ընթացքում։

9. ՎՆԱՍՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

§ 43. Անասունների ապահովագրության վնասները պետք և ապահովագրվողին վճարել ակտն հաստատելուց 5 որվա ընթացքում։

10. ՈՎ Ե ԿԱԶՄՈՒՄ ԱԿՏԵՐԸ ՔՈՉԱՎԱՅՐՈՒՄ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ ՍԱՏԿԵԼՈՒ ԴԵՐՔՈՒՄ

§ 44. Քոչվորական և կիսաքոչվորական շրջաններում, քոչավայրերում գտնվող անասունների անկման վերաբերյալ ակտերը կազմում և յենթաշրջանային ապահովագրական տեսուչը կամ գյուղխորհրդի քոչավայրերում յեղած լիազորը։ Թե մեկ և թե մյուս գեպքում ակտ կազմելուն պետք և մասնակից անել անասնաբուժին (անասնաբուժակին), վորը գտնվում և քոչավայրում կամ սպասարկում և քոչավայրի մոտակա գյուղխորհրդին։

§ 45. Յեթե անասունը սատկում և հոտում, վորը հեռու յետնվում քոչավայրի կենտրոնական կայանից և հնարավոր չեժամանակին հայտնել այդ մասին յենթաշրջանային ապահովագրական տեսչին կամ գյուղխորհրդի լիազորին (քոչավայրի), ապա նախնական ակտ անասունի անկման մասին կազմում են այն անձինք, վորոնց տնօրինության տակ և գտնվում հոտը (հովիվներ և այլն); Այդ ակտում ցույց ե տրվում՝ անասունի անկման ժամանակն ու պատճեռը, կամ այն հատկանիշները, վոր յեղել են տնտունի հիվանդության եղանական ժամանակը,

ինչպես նաև այն հանգամանքները, վորոնց առկայությամբ տվյալ դեպքն և տեղի ունեցել: Նախնական ականքն ստորագրում են բոլոր այն անձինք, վորոնք ներկա յեն յեղել այն կազմելու ժամանակ և հոտի վարիչը ներկայացնում է քոչակայրի կենտրոնական կայանին: Այնուհետև, ակտի տվյալների և վկաների հարցաքննության հիման վրա կազմվում է արդեն ակտ անասունի անկման մասին ԽՍՀՄ Ֆինժողկոմատի կողմից ճաստափած ձևի բւանկի վրա:

§ 46. Ակտը քոչակայրում սատկած անասունի մասին յենթաշրջանային ապահովագրական անսուչը կամ գյուղլսորհողի լիազորն անմիջապես ուղարկում և այն շրջանի ապահովագրական տեսչությանը, վորտեղից անասուններն են քոչել ստուգելու և շրջանային ապահովագրական հանձնաժողովին ներկայացնելու համար:

§ 47. Վնասները քոչակայրում գտնվող անասունների անկման համար հատուցվում են այս հրահանգի § 43-ում նախատեսնված կարգով:

11. ԽԵԶՊԻՍԻ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ, ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՂՈՒՆԵՐԻ ԵՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ ԿԱՄԱՎՈՐ ԿԱՐԳՈՎ

§ 48. Անասունների, թռչունների և մեղուների ապահովագրությունը կամավոր կարգով բաժանվում է. —

ա) կամավոր գերհովարային ապահովագրության, . վորն անց և կացվում այն դեպքերում, յերբ անասուններն արդեն ապահովագրված են պարտադիր կոպարային կարգով և նրանց տերերն ուղղում են իրենց ապահովել ավելի բարձր գումարով այդ անասունների անկումից վնասներ առաջանալու դեպքում, քան այդ սահմանված է պարտադիր կոպարային ապահովագրության վարձատրության նորմաներով.

բ) կամավոր ապահովագրության, վորը սահմանված է այն անասունների, թռչունների և մեղուների համար, վորոնք պարտադիր կոպարային կարգով չեն ապահովագրվում.

12. ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ, ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՂՈՒՆՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԶԱՓԵՐԸ

§ 49. Կոլանակառություններում և սկզբնական կոռպերատիվներում անասուններ, թռչուններ և մեղուներ կարելի յե առկա-

հովաղրել ուզած գումարով, ապահովագրվողի ցանկությամբ, բայց այդ գումարն ավելի լինել չե կարող, քան գերկոպարային կարգով ապահովագրվող անասունների վերաբերմամբ՝ անասունների լրիվ արժեքի (վորը սահմանում են ապահովագրական որգանները կոլտնտեսային շուկայի գների հիման վրա) և ապահովագրական վարձատրության կայուն նորմաների (վոր սահմանվում են պարտադիր կոպարային ապահովագրությամբ) միջև յեղած տարբերությունը։ Մայրածագարները, ազնվացեղ թռչունները և մեղուներն ապահովագրվում են պատասխանառվության այն նորմաների սահմաններում, վորոնք սահմանված են գաշնակից հանրապետությունների ժողկությունների կողմից և ՍՀՄ Պետապի համաձայնությամբ։

Կոլտնտեսականների, բանվորների, ծառայողների, մենատնտես գյուղացիների և այլ քաղաքացիների մոտ անասուններ կարելի յե ապահովագրել ուզած գումարով, ապահովագրվողի ցանկությամբ, բայց այդ գումարը չե կարող ավելի լինել քան.

ա) խոշոր յեղջերավոր անասունների, ձիերի, ուղտերի, ավանակների, զորիների վերաբերմամբ—անասունների արժեքի (վորը սահմանված ե բարձրագույն—գնման գների հիման վրա) և պարտադիր կոպարային ապահովագրության ապահովագրական վարձատրության կայուն նորմաների միջև յեղած տարբերությունը.

բ) փոչխարների, այծերի և խողերի վերաբերմամբ—պատասխանառվության այն նորմաները, վորոնք սահմանված են գաշնակից հանրապետությունների կողմից և ՍՀՄ Պետապի համաձայնությամբ։

§ 50. Կամավոր գերկոպարային կարգով կարելի յե ապահովագրել նույն անասուններին, վորոնք ապահովագրվում են պարտադիր կոպարային կարգով։ Զի կարելի ապահովագրել միայն՝ ա) անտեսություններում—ազնվացեղ ձիերին և ազնվացեղ խոշոր յեղջերավոր անասուններին, քանի վոր այդ անասուններն պարտադիր կոպարային կարգով ապահովագրվում են իբրեւ լրիվ արժեքով (§ 10 ծանոթ. 2). բ) մենատնտես գյուղացիների, վոչկոռպերացված տնայնագործների և արհեստագործների մոտ—10 տարեկանից ավելի բարձր հասակ ունեցող վորների մոտ—10 տարեկանից ավելի բարձր հասակ ունեցող վորը յեղջերավոր անասուններին և 2 տարեկանից ավելի բար-

ձըր հասակ ունեցող ձիերին, ուղարերին, ավանակներին և ջուրիներին:

Կամավոր կարգով կոլտնտեսություններում և սկզբնական կոռպերատիվերում կարելի յե ապահովագրել մայրագարներին և ազնվացել թոշուններին (հավեր, բաղեր, սագեր) 6 ամսական հասակից և մեղուներին փեթակներում (մեղուների ընտանիքներ), իսկ կոլտնտեսականների, մենատնտես գյուղացիների և այլ քաղաքացիների մոտ—վոչխարներին, այծերին և խողերին:

§ 51. Ապահովագրության ընդունվում են միմիայն առողջանասունները, թոշունները և մեղունները (ընտանիքներ): Անսուններ ապահովագրելիս նրանց առողջության վիճակը պետք է վորոշել մասնագետի (անասնաբուժի, անասնաբուժակի, զոռատեխնիկի, գյուղատնտեսի) մասնակցությամբ: Այս կամ այն շրջանում նման մասնագետներ չլինելու դեպքում թույլատըրվում ե վորպես բացառություն անսուններ ապահովագրել առանց մասնագետների մասնակցության: Այս գեղքում անսունների զննությունը կատարում ե ապահովագրական տեսուչը կամ ապահովագրական գործակալը:

13. ՅԵՐԻ Ե ՍԿՍՎՈՒՄ ՅԵՎ ՅԵՐԻ ՎԵՐՋԱՆՈՒՄ ՊԵՏԱ- ԹԻ ՊԱՏԱԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎՈՒՆԵՐԻ, ԹՌՉՈՒՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՂՈՒՆԵՐԻ ԿԱՍՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

§ 52. Պետապի պատասխանատվությունն սկսվում է այն պահից, յերբ ապահովագրվողը կատարում է իրենից հասանելիք ապահովագրական վճարումը, իսկ տարկետման դեպքում—առաջին մուծանքը կատարելու պահից, Յեթե ապահովագրական տեսուչն անսուններին զննում է առանց մասնագետի մասնակցության (այս հարահանգի § 51), ապա Պետապի պատասխանատվությունն սկսվում է ապահովագրական վճարումը կատարելուց 15 որ հետո միայն և վերջանում ե՝ պատասխանատվության սկզբի որվանից մեկ տարի հետո:

§ 53. Յեթե անասունների, թոշունների և մեղունների (ընտանիքներ) կամավոր ապահովագրության վճարումը տարկետլու դեպքում ապահովագրվողը սահմանված ժամկետում չի մուծում վճարման տարկետած մասը, ապա ապահովագրությունը վերջացած է համարվում այն պահից, յերբ յերկրորդ վճա-

լուսմը պետք և կատարված լիներ: Նման գեղքերում ապահով-
դրության դադարեցման մասին ապահովագրական տհառչն ան-
միջապես պետք և հայտնի ապահովագրվողին:

§ 54. Անասունների, թուզունների և մեղունների կամավոր
ապահովագրության պատասխանատվությունը վերջանում ե'
ա) յերբ նրանք գուրս են գալիս այն տնտեսություններից, վոր-
տեղ ապահովագրված են յեղեւ բ) յերբ ապահովագրությունը
դադարեցվում ե շրջանային ապահովագրական հանձնաժողովի
վորոշմամբ (այս հրահանգի § 8):

ԾԱՌՈԹՈՒԹՅՈՒՆ.—Յեթե տնտեսությունից դուրս
յեկած անասունի փոխարեն և մինչեւ նրա ապահովագրու-
թյան ժամկետը լրանան ապահովագրվողը ձեռք ե բերում
նոր անասուն, ապա Պետապի պատասխանատվությունը
կարելի յե փոխադրել այդ նոր անասունի վրա, յեթե ա-
պահովագրվողն այդ մասին դիմում կտա ապահովագրա-
կան տեսչությանը:

14. ՎՈՐ ԴԵՊՔԵՐՈՒՄ Ե ՊԵՏԱԿԱՐԸ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎՆԱՍՆԵՐՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ, ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՂՈՒՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

§ 55. Անասունների, թուզունների և մեղունների կամավոր
ապահովագրության գծով Պետապը՝ հատուցում և վնասները
նույն դեպքերում, ինչ վոր պարտադիր կոպարային ապահովա-
գրության վնասները:

Կամավոր գերկոպարային կարգով ապահովագրված անա-
սունին սպանելու (մորթելու) դեպքում և յեթե միսը պիտանի
յե ճանաչված ուտելու համար, վնասները հատուցվում են պար-
տադիր կոպարային և կամավոր գերկոպարային ապահովագրու-
թյան ապահովագրական վարձատրության ընդհանուր գումարի
և մսի արժեքի միջն յեղած տարբերության չափով:

§ 56. Մեղունների (մեղունների ընտանիքներ) կամավոր ա-
պահովագրության գծով Պետապը հատուցում և վնասները, յերբ
նրանք սատկում են հիվանդություններից, դժբախտ գեղքերից
և տարերային աղկտներից, ինչպես նաև յերբ մեղունների ըն-
տանիքները կոչնչացվում են վարակիչ հիվանդությունների գեմ
պայքարելու կարգով:

§ 57. Պետապը վնասներ չի հատուցում այն բոլոր դեպքե-
րում, յերբ անասունները, թուզուններն ու մեղունները սատկում
են տիրոջ մեղքով (տես այս հրահանգի § 5):

Բացի այդ, վեասները չեն հոտառցվում:

ա) յեթե ապահովագրվողը ժամանակին չի կատարում կամավոր ապահովագրության տարկետած վճարումները.

բ) յեթե առանց մասնագետի զննության ապահովագրված անասունները (տես այս հրահանգի § 41) սատկում են կամավոր ապահովագրության վճարումը կատարելու պահից 15 որվաշնթացքում (տես այս հրահանգի § 52), անկախ սատկելու պատճառներից:

15. ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ, ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՂՈՒՆՆԵՐԻ ԿԱՄԱԳՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՆԱՍՆԵՐ ՎՈՐՈՇԵԼՈՒ ՅԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 58. Անասունների, թռչունների և մեղունների սատկելու դեպքում ակտ կազմվում է նույն կարգով, ինչ կարդ սահմանված ե անասունների պարտադիր կողարային ապահովագրության համար: Այն անձինք, վորոնք դալիս են ակտ կազմելու պետք ե պահանջեն ապահովագրվողից անդորրագիր կամ այլ փաստաթղթեր, վորը հաստատում է, վոր սատկած անասունները, թռչունները ու մեղունները (ընտանիքներ) ապահովագրված են յեղել կամավոր կարգով:

§ 59. Յեթե տեսառության բոլոր անասունները կամ միկանույն տեսակի և սեռի անասունները կամավոր գերկողարային կարգով ապահովագրված են միանման գումարով և վեասներ վորոշելիս կպարզվի, վոր ապահովագրված անասունների տեսակի և սեռի անասունների թիվը տնտեսության մեջ ավելի յի (նոր ընդունված կամ ապահովագրական հասակին հասած անասունների հաշվին), քան ապահովագրված ե կամավոր կարգով, ապա մեկ անասունի կամավոր ապահովագրության ապահովագրական վարձատրությունը պետք ե պակասեցնել տվյալ տեսակի կամ սեռի անասունների թիվի ավելացմանը համեմատ: Այս դեպքում մեկ անասունի ապահովագրական վարձատրությունը վորոշվում է հետևյալ կերպ՝ ապահովագրական այն ընդհանուր գումարը, վորով սատկած անասունների տեսակի և սեռի անասուններ են ապահովագրված, բաժանվում ե տվյալ տեսակի և սեռի ապահովագրական հասակ ունեցող անասունների առկաթվի վրա:

Որինակ՝ կոլտնտեսության բոլոր կովերը, թվով 50 գլուխ, ապահովագրված են կամավոր (գերկողարային) կարգով 600-

կան ոռուք., այսինքն, ընդամենը 30.000 ռ.: Վճառներ վորոշեցին կուտանսության մէջ առկա յի յեղել 60 կով, ընդվորում, այդ 10 ավելորդ կովերի մասին. Կուտանսությունը շրջանային ապահովագրական տեսչությանը չի հայտնել և նրանց լրացուցիչ կերպով չի ապահովագրել։ Սատկած կովի համար կարելի յի վճարել վոչ թե 600 ռ., այլ 500 ոռուք. միայն (30.000:60): Նույնպես պետք է վարկել տնտեսության մէջ միանման գումարով ապահովագրված մանր անասունների, թռչունների և մեղունների (ընտանիքներ) ապահովագրական ֆլաները վորոշելիս:

16. ՖՈՂՈՔՆԵՐ

§ 60. Վճառներ վորոշելու և հատուցելու ընազավառում շրջանային և յենթաշրջանային ապահովագրական տեսուչների կատարած գործողությունների գեմ բողոքներ ապահովագրվողները շրջանային ֆինանսական բաժնին տալիս են վոչ ուշ քան համապատասխան տեսչի կողմից սխալ գործողություն կատարելուց մեկ ամսվա ընթացքում։ Մեկ ամսվա ժամկետը լրանալուց հետո շրջանային ֆինանսական բաժնի վարիչը բողոքներ չի ընդունում։

§ 61. Ապահովագրվողների բողոքները շրջանային և յենթաշրջանային տեսուչների սխալ գործողությունների գեմ (ֆլաները վորոշելու և հատուցելու առթիվ) անպայման քննում և անձամբ շրջանային ֆինանսական բաժնի վարիչը։ Բողոքի քննությանը կանչըլում է նաև բողոքատուն, իսկ յեթն նա չի ներկայանում, ապա բողոքը կարելի յե քննել նրա բացակայությամբ։

Շրջանային ֆինանսական բաժնի վարիչը պարտավոր է վոչ ուշ քան բողոքն ստանալուց 20 որվա ընթացքում (իսկ կարմիր բանակայինների բողոքների վերաբերմամբ՝ վոչ ուշ քան բողոքն ստանալուց 7 օրվա ընթացքում) քննել այն և իր վորոշման մասին հայտնել բողոքատույին գրավոր։

§ 62 Շրջանային ֆինանսական բաժնի վարիչի վորոշումը, ինչպես նաև շրջանային ապահովագրական հանձնաժողովի վորոշումը կարելի յե բողոքարկել, վոչ ուշ քան ապահովագրվողն հայտարարելուց մեկ ամսվա ընթացքում, մարդային բաժնում չունեցող դաշնակից հանրապետության կամ ինքնավար հանրապետության Պետական ապահովագրության վարչությանը, Պետապի յերկրային կամ մարդային վարչությանը, իսկ այլ վարչությունների վորոշումներ՝ մարզային բաժանում ունեցող դաշնակից հանրապետությունների Պետապի վարչությանը կամ ԽՍՀՄ Պետապի Պետապի վարչությանն ըստ պատկանելույն։

Մեկ ամսվա ժամկետը՝ ըրանալուց հետո Պետական ապահովագրության վարչությունը բողոքներ չի ընդունում:

Դաշնակից կամ ինքնավար հանրապետության, մարզի կամ յերկրի Պետական ապահովագրության վարչությունը պարտավոր է քննել ներկայացված բողոքը, վոչ ուշ քան այն ստանալուց մեկ ամսվա ժամկետում (իսկ կարմիր բանակայինների բողոքների վերաբերմամբ՝ վոչ ուշ քան բողոքն ստանալուց 15 որվանինթացքում) և իր վորոշման մասին դրավոր հայտնի բողոքատույցին և համապատասխան շրջանային ֆինանսական բաժնին:

17. ՊԵՏԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿԱԿԱՎԱՆ ՅԵՎ ԿՈՌՈՒՐԱՏԻՎ ԶԵՐՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԱՆԿՄԱՄԲ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՍՆԵՐ ՎՈՐՈՇԵԼՆ ՈՒ ՀԱՏՈՒՑԵԼԸ

§ 63. Պետական հիմնարկներին և ձեռնարկություններին, կոռպերատիվ, պլոտֆեսիոնալ և հասարակական կազմակերպություններին պատկանող, պարտադիր կամ կամավոր կարգով ապահովագրվող անասունների անկման պատճառները վորոշվում են, կազմվում ակտեր և հատուցվում վնասները՝ այն հիմունքներով, վորոնք նախատեսնված են այս հրահանգում:

Այս հրահանգը հրատարակելուց հետո վերացվում է № 326-կ. հրահանգն՝ անասունների ապահովագրության ակտեր կազմելու և վնասներ հատուցելու վերաբերյալ, հաստատված ԽՍՀ Մժինժողկոմատի կողմից 1933 թ. հունիսի 8/16-ին:

ԽՍՀՄ Քինժողկոմատ

A 24487

ԽՍՀՄ Պետական Գլխավոր Վարչություն

1937 թ. մայիսի 28-ին.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0001781